

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

պրն. Լ.Հ. Մկրտչյանին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

Արթուր Սուրենի Աղաբաբյանից
(ղիմողի անուն, ազգանուն)

ք. Երևան, Քոչարյան փ. 12 շ., 5 բն, հեռ. 091-41-15-30,

e-mail: movuni@mail.ru

(բնակության վայր, հեռախոսի համար, էլ. փոստի հասցե)

Մովսես Խորենացու անվան համալսարան

(կազմակերպության լրիվ անվանումը, պետ. գրանցման համարը)

ՄԵՐԲԱ ՕԻԱ վկայական 027773

Գրանցման համարը 282.110.02.103

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Համալսարանի կանոնադրության պետական գրանցման համարը:
2. Անփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ:
3. Մոտիվացիոն նամակ հիմնավորում՝ հանրային խորհրդում ներգրավման աշխատանքներին մասնակցության վերաբերյալ:
4. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:

Դիմող՝

Արթուր Սուրենի Աղաբաբյան

„17“ նոյեմբեր 2016թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մուտք No 31100 16
“17” 11 2016թ.

Summit County
24 Summit Street, 1004
Denver, CO 80202
303-733-1111

Office of the
County Clerk

Case No. 027773 *

Summit County, Colorado

INVESTIGATION REPORT

(Investigation Report)

Case No. 027773

Investigation Report No. 027773-001

Date of Report: 07-08-2002

Investigation No. 37202857

Investigation Date: 07-08-2002

Investigation Time: 16

Investigation Location: 1004 Summit Street

Investigation Time: 16:00

Investigation Date: 07-08-2002

(Signature)

Investigation Date: 07-08-2002

Ամփոփ տեղեկանք
Վերջին 2 տարում Ա.Ս.Աղաբաբյանի ծավալած
գործունեության վերաբերյալ

2014 - 2016թթ. -ին Ա.Ս.Աղաբաբյանը հանդիսացել է (ներկայումս նույնպես) Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտորը:

Մովսես Խորենացու անվան համալսարանը հիմնադրվել է որպես բարձրագույն ուսումնական հաստատություն, հիմնադրման օրվանից որդեգրել է մի շարք սկզբունքային դրույթներ: Դրանցից են.

ա) բարձրագույն ուսումնական հաստատության առաքելության հստակ ձևակերպում,

բ) ազնիվ, թափանցիկ և օրինական աշխատանքի որդեգրում,

գ) որակյալ և մրցունակ կրթության տրամադրում,

դ) աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրում և շրջանավարտների գիտելիքների և կարողությունների համապատասխանումը տվյալ պահանջներին,

ե) հասարակական պատասխանատվության գիտակցում:

Համալսարանի առաքելությունը, նպատակը և դրանց իրականացման քաղերը հստակ ձևակերպված են նրա ռազմավարական ծրագրում, իսկ 2016-2020թթ. ռազմավարական ծրագրում դրանք վերանայվել են և առավել կատարելագործված ձևով են նարկայացված: Հաշվետու տարիների ընթացքում համալսարանը կատարել է բազմաթիվ աշխատանքներ, դրանցից կարելի է թվել.

1. համալսարանի ներքին ստորաբաժանումների և կառուցվածքային սխեմայի հստակեցում, աշխատանքային պաշտոնների անձնագրերի ստեղծում;
2. որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերի կազմակերպում և զարգացում;
3. ուսումնառության արդիական մեթոդների ներդրում և ժամանակակից տեխնիկայի կիրառում;
4. նյութատեխնիկական բազայի բարելավում և թարմացում;

5. դրամաշնորհային ծրագրերին մասնակցություն;
6. <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի կողմից իրականացվել է ինստիտուցիոնալ կարողությունների հավաստագրման գործընթացի մասնակցություն;
7. մի շարք միջազգային պայմանագրերի կնքում (այդ թվում Ռուսաստանի, Գերմանիայի, Իտալիայի, Վրաստանի համապատասխան համալսարանների և կրթական կազմակերպությունների հետ);
8. անմիջապես ռեկտոր Ա.Ս.Ադաբաբյանի մասնակցությամբ իրականացվել է այց Հռոմի Սապիենզա համալսարան որակի ապահովման գործընթացի հետ կապված համապատասխան աշխատանքների ծանոթացման և փորձի փոխանակման նպատակով (2014թ.-ին);
9. ռեկտոր Ա.Ս.Ադաբաբյանի մասնակցությամբ իրականացվել է այց Ստավրոպոլի համալսարան (ЧОУ ВО «Ставропольский университет (СГУ)»), կազմակերպվել է համատեղ միջազգային կոնֆերանս (Актуальные проблемы современной науки), որտեղ Մովսես Խորենացու անվան համալսարանը հանդիսացել է համակազմակերպիչ (2016թ.):
10. վերջին երկու տարիների ընթացքում սոցիալական դժվարին պայմաններում ապահովվել է համալսարանի կայուն և բնականոն գործունեությունը:
11. Բուհի որակի ապահովման և ներքին կանոնակարգային հարցերի հետ կապված թափանցիկ աշխատելու նպատակով բուհում հրատարակվել է՝
 - <<Ուսանողի ուղեցույց>>
 - <<Պրոֆեսորադասախոսական կազմի ուղեցույց>>
 - <<Որակի ապահովման>> ձեռնարկ
12. Հավատարիմ է մնացել իր կողմից որդեգրած հասարակական պատասխանատվության սկզբունքներին:

Մտոիվացիոն նամակ հիմնավորում՝ հանրային խորհրդում ներգրավման
աշխատանքներին մասնակցության վերաբերյալ

Կարևորություն տալով ՀՀ ԿԳ նախարարությանը կից հանրային խորհրդի գործունեությանը, ինչպես նաև հաշվի առնելով, որ նշված խորհրդում կբարձրացվեն հարցեր, որոնք կնպաստեն ՀՀ-ում կրթական համակարգի բարելավմանը և կատարելագործմանը, կրթության բնագավառում նոր և արդյունավետ քաղաքականության մշակմանը և ՀՀ-ում կրթության որակի բարձրացմանը, գտնում եմ, որ Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտոր Արթուր Մուրենի Աղաբաբյանի մասնակցությունը նշված խորհրդի աշխատանքներում կլինի բավականին արդյունավետ, որովհետև կրթության բնագավառում նրա 32-ամյա աշխատանքային փորձը, ինչպես նաև մասնավոր բուհական համակարգում 20-ամյա ղեկավարման փորձը կնպաստի վերոնշյալ հարցերի վեր հանմանը:

Բացի վերոնշյալից, Ա.Աղաբաբյանի մասնակցությունը ՀՀ ԿԳ նախարարին կից հանրային խորհրդում կարտահայտվի հետևյալ սկզբունքներով՝

ա) ՀՀ կրթության դաշտում միասնական և համահավասար օրենսդրական դաշտի ապահովում և կիրառում,

բ) կրթության ոլորտում ազնիվ մրցակցային պայմանների ապահովում,

գ) ՀՀ կրթական դաշտի օրենսդրական և ենթօրենսդրական նորմերի բարելավում (այսօր կրթական ոլորտին առնչվող օրենքներում, ենթօրենսդրական ակտերում կան որոշակի իրար հակասող կետեր),

դ) կրթության ոլորտի որակի ապահովման մեխանիզմների ստեղծում,

ե) ՀՀ կրթական համակարգի թափանցիկ աշխատանքի քաղաքականության մշակում:

Ա. Աղաբաբյանի կողմից կբարձրացվեն նաև հարցեր, որոնք շարադրված են սույն գրության 7-8 էջերում (1-12 կետերը):

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Վերջին երեք տարիներին ՀՀ ԿԳՆ-ի կողմից կատարվել են բազմաթիվ գործնական քայլեր, մշակվել և համապատասխան մարմիններում ընդունվել են ոլորտը կարգավորող իրավական ակտեր:

Կատարված գործնական քայլերից առաջինը կարելի է նշել 2015թ. -ին Երևանում անցկացված Բոլոնիայի զագաթնաժողովի հերթական նիստը, որը ՀՀ կրթական համակարգի միջազգայնացման ասպարեզում էական առաջընթաց էր:

2014թ.-ին ԵՊՀ-ում կազմակերպվեց և անցկացվեց EURASHE-ի հերթական համաժողովը:

Աղվերանում և Ծաղկաձորում անցկացվեցին բազմաթիվ միջազգային հանդիպումներ ամենատարբեր հարցերի քննարկման նպատակով (բարձրագույն կրթության մասին ՀՀ օրենքի նախագծի քննարկում, կրթության բնագավառում հակակոռուպցիոն ծրագրերի քննարկում և այլն):

Ընդունված բազմաթիվ իրավական ակտերից կարելի է առանձնացնել
ա) հանրակրթության մասին օրենքում կատարված փոփոխությունները.
բ) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը բարձր առաջադիմությամբ ավարտած շրջանավարտների բարձրագույն ուսումնական հաստատությունում համապատասխան մասնագիտությամբ ուսումը շարունակելու կարգը հաստատելու (և համապատասխան 20.05.2002թ. ՀՀ կառավարության N 589 որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին) ՀՀ կառավարության 08.07.2015թ. N 752-Ն որոշումը.

գ) հեռակա ուսուցման կարգում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ ԿԳ նախարարի N 666-Ն հրամանը (20.06.2014թ.) և այլն:

Այս շարքում ամենակարևորներից մեկը կարելի է առանձնացնել ՀՀ ԿԳՆ քաղաքականության արդյունքում մասնագիտությունների խոշորացման հարցը, որը բխում է եվրոպական բարձրագույն կրթության առաջավոր փորձից և այլն:

Մակայն ինչքան էլ փոփոխվեն և կատարելագործվեն օրենքները և իրավական ակտերը, միննույն է, կախված ժամանակի հրամայականից նրանց փոփոխությունները իրականացվելու են պարբերաբար : ՀՀ ԿԳ նախարարության որդեգրած քաղաքականությունը այս ուղղությամբ ողջունելի է և մասնավորապես ՀՀ ԿԳ նախարարին կից հանրային խորհրդի առաքելություններից մեկը կլինի ՀՀ կրթական համկարգի ժամանակակից հիմնախնդիրների բարձրացումը և լուծումը:

Ողջունելի կարելի է համարել ՀՀ ԿԳ նախարարությունում բացված թե՛ զծի առկայությունը, որը հնարավորություն կտա առավել օպերատիվ ձևով արձագանքելու ոլորտում առկա խնդիրներին:

ՀՀ ԿԳ նախարարության և մասնավորապես ՀՀ ԿԳ նախարարին կից հանրային խորհրդի հետագա անելիքների մասով կարելի է առանձնացնել հետևյալ հարցերը.

1. Կրթության բնագավառում ռազմավարական և ազգային շահերից բխող քաղաքականության մշակում և իրականացում:
2. Կրթության բնագավառում օրենսդրական դաշտի հստակեցում և օրենքների հետևողական կիրառում:
3. Հանրակրթական դպրոցի դերի բարձրացում, ավագ դպրոցներին ներկայացվող պահանջների վերանայում:
4. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առաքելությունների և նպատակների ճշգրտում և համապատասխանեցում ՀՀ տնտեսական պահանջների շահերին:
5. Բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտելիքների գնահատման մեխանիզմների մշակում և ներդրում այն սկզբունքով որ դասախոսի կամ գնահատողի սուբյեկտիվ մոտեցումը հասցվի նվազագույնի (այսօր ՀՀ և արտասահմանյան հեղինակավոր բուհերի միջի համապատասխան վերլուծություն կատարելիս կարելի է նկատել, որ կառուցվածքային և ձևի առումով դրանք համադրելի են և իրար մոտ, ինչը չի կարելի ասել գնահատականների օբյեկտիվ արտացոլման դեպքում):

6. Մշակել այնպիսի քաղաքականություն և սկզբունքներ, որ առավելագույնս նվազեցվի բարձր ընդունակություններ ունեցող երիտասարդության արտահոսքը հանրապետությունից:
7. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարության դերի բարձրացում:
8. Ուսումնական հաստատություններում պրակտիկայի դերի զգալի բարձրացում:
9. Բուհերի շրջանավարտների համար վերջնարդյունքների սահմանման և գնահատման նոր մեխանիզմների ներդրում:
10. Բուհի հաշվետվողականության և պատասխանատվության բարձրացում:
11. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հստակ տարանջատում և նպատակային ուսուցման կազմակերպում:
12. Պաշտոնական անձանց վարքագծի կանոնների, էթիկայի և պատասխանատվության նորմերի սահմանում: